COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

www.coe.int

Ի՞նչ է Եվրոպայի խորհուրդը

1949թ. ստեղծված Եվրոպայի խորհուրդը քաղաքական կազմակերպություն է, որի նպատակն է խթանել ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և իրավունքի գերակայությունը ամբողջ Եվրոպայում: Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում գտնվող կենտրոնական գրասենյակի միջոցով Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունները ըստ էության տարածվում են եվրոպական ողջ մայրցամաքով:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները

Ալբանիա, Անդորա, Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոլդովա, Մոնակո, Մոնթենեգրո, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա, Սլովակիայի հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, «Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն», Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:

Մշակված է Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինության կողմից
Հանրային կապերի բաժնի և Արտաքին կապերի բաժնի համատեղ խմբագրությամբ
Դիզայնը և էջադրումը կատարել է Փաստաթղթերի և հրատարակությունների բաժինը (DPDP),
Եվրոպայի խորհուրդ, 2008թ. հոկտեմբեր
Հայերեն տարբերակը պատրաստել է Հայաստանում ԵԽ Տեղեկատվական գրասենյակը

Քննարկումների դահլիճ «Եվրոպայի պալատ»

ԵԽԽՎ նստաշրջան

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Եվրոպայի խորհրդի հիմնարար արժեքների պահապանը

Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշումներ կայացնող մարմինն է և կազմված է 47 անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից կամ Ստրասբուրգում նրանց մշտական դիվանագիտական ներկայացուցիչներից: Նախարարների կոմիտեն որոշում է Եվրոպայի խորհրդի քաղաքականությունը ու հաստատում է կազմակերպության աշխատանքային ծրագիրը և բյուջեն: Այն որոշում է, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել Խորհրդարանական վեհաժողովի և Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականների կապակցությամբ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

Քաղաքական մղիչ ուժ

Խորհրդարանական վեհաժողովը Եվրոպայի խորհրդի քաղաքական մղիչ ուժն է: Նրա 636 անդամները կամ փոխարինողները՝ 47 անդամ պետությունների խորհրդարաններից, քննարկում են ընդունման նպատակով առաջարկվող փաստաթղթերը: Այս փաստաթղթերը կամ հանձնարարականները կարևոր ուղենիշներ են Նախարարների կոմիտեի, ազգային կառավարությունների և խորհրդարանների համար: Վեհաժողովը նախաձեռնել է բազմաթիվ միջազգային պայմանագրեր՝ օգնելով ստեղծել օրենսդրական համակարգ ամբողջ Եվրոպայում:

Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նստաշրջանը

Եվրոպայի պալատի նախամուտքը

ՏԵՂԱԿԱՆ և ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ

Հիմնարար ժողովրդավարության պահապանը

Կոնգրեսը կառավարության տեղական և տարածքային շերտերին լիազորությունների փոխանցումը խթանող ուժն է: Այն կազմված է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների տեղական և տարածքային իշխանությունների ընտրված ներկայացուցիչներից: Այն վերահսկում է տեղական և տարածքային ժողովրդավարության զարգացումը, խրախուսում է քաղաքական երկխոսությունը պետական կառավարման և տարածքային մարմինների միջև և նպաստում տարածքային և տեղական անդրսահմանային համագործակցությանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՈԿԿ/ INGO) ՀԱՄԱԺՈՂՈՎ

Կենսական կապի ապահովում քաղաքացիական հասարակության հետ

Համաժողովը ներառում է մոտ 400 միջազգային կազմակերպություններ: Այն կենսական կապեր է ապահովում քաղաքական գործիչների և հասարակության միջև և քաղաքացիական հասարակության ձայնն է հնչեցնում Եվրոպայի խորհրդում: Եվրոպայի խորհրդի աշխատանքը մեծապես շահում է միջազգային ՈԿԿ-ների փորձի և եվրոպական քաղաքացիների համար նրանց հասանելիության շնորհիվ:

Դատարանի շենքը, Ստրասբուրգ

«Եվրոպայի պալատը» Մարիանո Գոնսալես Բելտրան-ի «Մարդու իրավունքների» արձանով

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հիմնարար ազատությունների պաշտպան

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը գտնվում է Ստրասբուրգում, մշտապես գործող դատական մարմին է, որը պատասխանատու է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կատարման վերահսկման համար: Նրա դերն է երաշխավորել Կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, որի ստորագրող կողմ են Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունները: Դատարանի կազմում կա նույնքան դատավոր, որքան պայմանավորվող կողմ ունի կոնվենցիան:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Մարդու իրավունքներին խարսխված ժողովրդավարական մշակույթների զարգացման խթանում

Հանձնակատարն անկախ հաստատություն է և պատասխանատու է անդամ պետություններում կրթության, իրազեկության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանման ու Եվրոպայի խորհրդի չափանիշներ սահմանող փաստաթղթերին լրիվ և արդյունավետ համապատասխանության երաշխավորման համար: Հանձնակատարն էապես կանխարգելող դեր է խաղում՝ իրականացնելով տարբեր գործառույթներ, որոնք տարբերվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և պայմանագրերի վրա հիմնված այլ կառույցների գործառույթներից: Հանձնակատարը գործադիր լիազորություններ չունի:

Եվրոպայի պալատի մուտքը

Ագորայի շենքը

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կազմակերպության առաջնորդում և կառավարում

Ընտրվում է Խորհրդարանական վեհաժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Եվրոպայի խորհրդի աշխատանքային ծրագրի և բյուջեի ռազմավարական պլանավորման և ուղղորդման համար, ինչպես նաև վերահսկում է կազմակերպության ամենօրյա կառավարումը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐ

Եվրոպական դրոշը՝ 12 աստղերից կազմված շրջանը կապույտ խորապատկերին, ներկայացնում է Եվրոպայի ժողովուրդների միասնությունը: (Աստղերի թիվը չի փոփոխվում, տասներկուսը կատարելության խորհրդանիշն է): Դրոշն ընդունվել է 1955թ-ին Նախարարների կոմիտեի կողմից՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկով: 1986թ. մայիս ամսից ի վեր եվրոպական դրոշը նաև Եվրոպական միության պաշտոնական խորհրդանշանն է:

1972թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն հաստատեց Եվրոպայի հիմնը՝ Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի Ջոն ուրախության նախերգանքի երաժշտական մշակումն ըստ Հերբերտ ֆոն Կարայանի: 1985թ. այն ընդունվեց ԵՄ Պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից, որպես Եվրոպական միության պաշտոնական հիմն: Նպատակը անդամ պետությունների հիմները փոխարինելը չէ, այլ փառաբանել նրանց ընդհանուր արժեքները և նրանց միասնությունը բազմազանության մեջ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ 47 ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային ուրիշ ի՞նչ կազմակերպությունների են նրանք անդամակցում

Եվրոպայի խորհուրդ 47 անդամ պետություններ	ԵՄ 27 անդամ	ԵԱՀԿ 56 անդամ	ՄԱԿ 192 անդամ
Ալբանիա			
Հայաստան			
Ադրբեջան			
Բոսնիա և Հերցեգովինա			
Խորվաթիա			
Չեխիայի հանրապետություն			
Էստոնիա			
Ֆրանսիա			
Գերմանիա			
Հունգարիա			
Իռլանդիա			
Լատվիա			
Լիտվա			
Մալթա			
Մոնակո			
Նիդեռլանդներ			
Լեհաստան			
Ռումինիա			
Սան Մարինո			
Սլովակիայի հանրապետություն			
Իսպանիա			
Շվեյցարիա			
Թուրքիա			
Միացյալ Թագավորություն			

Եվրոպայի խորհուրդ 47 անդամ պետություններ	ԵՄ 27 անդամ	ԵԱՀԿ 56 անդամ	ՄԱԿ 192 անդամ
Անդորրա			
Ավստրիա			
Բելգիա			
Բուլղարիա			
Կիպրոս			
Դանիա			
Ֆինլանդիա			
Վրաստան			
Հունաստան			
Իսլանդիա			
Իտալիա			
Լիխտենշտեյն			
Լյուքսեմբուրգ			
Մոլդովա			
Մոնտենեգրո			
Նորվեգիա			
Պորտուգալիա			
Ռուսաստանի Դաշնություն			
Սերբիա			
Սլովենիա			
Շվեդիա			
«Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն»			
Ուկրաինա			

* Մենք թվարկել ենք միայն այն երկրները, որոնք մաս են Եվրոպայի խորհրդի անդամներ են: Եվրոպայի միության բոլոր պետությունները սկզբից Եվրոպայի խորհրդի անդամներ են եղել:

Տեքստը պատրաստվել և խմբագրվել է ԵԽ Հարավային կոմունիկացիաների տնօրինության վերատպությամբ: Սարաքրդը, www.coe.int

Gyss Imprimeur Obernai - 281 487

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

www.coe.int

«Եվրոպայի պալատ», Ստրասբուրգ

Եվրոպայի խորհրդի արտաքին հարաբերությունները կազմված են՝

- այլ կազմակերպությունների և հաստատությունների, մասնավորապես՝ Եվրոպական միության (ԵՄ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), և Միավորված ազգերի կազմակերպության հետ արտաքին հարաբերություններից
- ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների հետ (պետությունների, որոնք հնարավորություն չունեն դիմել ԵՄ անդամակցության համար) արտաքին հարաբերություններից

Միջազգային այլ կազմակերպությունների և հաստատությունների, մասնավորապես Եվրոպական միության, ԵԱՀԿ-ի և Միավորված ազգերի կազմակերպության հետ իր փոխհարաբերություններում Եվրոպայի խորհուրդը երաշխավորում է ժողովրդավարական և ապահով Եվրոպա կառուցելու ընդհանուր նպատակին ուղղված իր գործողությունների կոմպլիմենտարությունը (փոխլրացվածությունը):

Այս փոխհարաբերությունները ներկայում ուղղորդվում են 2005թ. Վարշավայում Պետությունների և կառավարությունների ղեկավարների Երրորդ գագաթաժողովի որոշումներով: Վարշավայի Հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը հաստատում են Եվրոպայի խորհրդի դերը եվրոպական բեմահարթակում՝ սահմանելով կազմակերպության առանցքային խնդիրները: Կառավարության ղեկավարները հռչակեցին իրենց պատրաստակամությունը՝ «երաշխավորելու Եվրոպայի խորհրդի և ժողովրդավարական ու ապահով Եվրոպա կառուցելու ջատագով այլ կազմակերպությունների փոխլրացվածությունը»՝ հստակ ուշադրություն բևեռելով Եվրոպական միության, ԵԱՀԿ-ի և Միավորված ազգերի կազմակերպության հետ փոխհարաբերություններին:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

www.europa.eu

Եվրոպական խորհրդարանի շենքը, Ստրասբուրգ

Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական միությունը ունեն համագործակցության երկարաժամկետ ավանդույթ, որը հիմնված է նրանց համար ընդհանուր արժեքներին՝ մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն: Կազմակերպություններից յուրաքանչյուրը շահում է մյուսի համապատասխան ուժեղ կողմերից և համեմատական առավելություններից, հմտություններից և փորձառությունից՝ միաժամանակ խուսափելով անօգուտ կրկնօրինակումից:

2007թ. մայիսից ի վեր երկու կազմակերպությունների միջև փոխըմբռնման համաձայնագիրը նոր շրջանակ է տրամադրում այս համագործակցության համար: Այն հաստատում է Եվրոպայի խորհրդի դերը որպես մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և Եվրոպայում ժողովրդավարության հենակետ, սահմանում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում երկու կազմակերպությունների իրավական նորմերի միջև համաձայնեցվածության անհրաժեշտությունը, ինչպես նաև խրախուսում է Եվրոպայի խորհրդին և Եվրոպական միությանը ապագայում միասին աշխատել ավելի սերտորեն:

Շուրջ 15 տարի Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական միությունը իրականացրել են բազմաթիվ համատեղ ծրագրեր՝ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքը խթանելու և առանց բաժանարար գծերի Եվրոպայում կրթության, երիտասարդության և սոցիալական հարցերին անդրադառնալու ուղղությամբ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՀԿ ՀԵՏ

www.osce.org

ԵԱՀԿ գլխավոր գրասենյակը Վիեննայում

Եվրոպայի խորհուրդը և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) հետամուտ են, յուրաքանչյուրն իր ձևով, Եվրոպայում ժողովրդավարության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին խարսխված կայունության և անվտանգության խթանմանը:

Համագործակցությունը երկու Կազմակերպությունների միջև շարունակում է կենտրոնացված մնալ արդյունքներին՝ բոլոր մակարդակներում մշտապես բարձր մակարդակի հանդիպումների և խորհրդակցությունների անցկացմամբ: Օրինակ, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) սերտորեն աշխատում է Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների հետ, ինչպիսիք են Խորհրդարանական վեհաժողովը և Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության եվրոպական (Վենետիկի) հանձնաժողովը: Այս համագործակցությունը ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպես՝ ահաբեկչությունը, խտրականության բացառումը և ընտրությունների դիտարկումը:

Երկու կազմակերպություններն էլ խթանում են մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը, քանի որ դրանք են քաղաքական կայունության, լավ կառավարման, տնտեսական զարգացման և սոցիալապես կայուն հասարակությունների կենսական բաղադրիչները:

Ներկայում համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ միջև բևեռվում է չորս գերակա ոլորտների՝ պայքար ահաբեկչության դեմ, ազգային փոքրամասնությունների պաշտպանություն, պայքար թրաֆիկինգի դեմ, ինչպես նաև հանդուրժողականության և խտրականության բացառման խնդիրներ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ

www.un.org

Միավորված ազգերի կազմակերպության շենքը Նյուր Յորքում

Եվրոպայի խորհրդի և Միավորված ազգերի կազմակերպության միջև պաշտոնական փոխհարաբերությունները սկսվել են դեռ 1951թ.-ից: Եվրոպայի խորհրդին շնորհվել էր դիտորդի կարգավիճակ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայում 1989թ. հոկտեմբեր ամսից: Որպես ՄԱԿ-ի տարածաշրջանային գործընկեր, Եվրոպայի խորհուրդը կանոնավոր մասնակցում է ՄԱԿ-ի հիմնական գործակալությունների աշխատանքին:

Ամուր համագործակցություն է հաստատվել մարդու իրավունքների պաշտպանության, ռասիզմի, խտրականության, քսենոֆոբիայի և անհանդուրժողականության դեմ պայքարի, փոքրամասնությունների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման, մարդկային էակների թրաֆիկինգի և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի, երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման և միջմշակութային երկխոսության ոլորտներում:

Եվրոպայի խորհուրդը շարունակում է սերտորեն աշխատել ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի և այլ մարմինների, այդ թվում՝ Փախստականների և մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարների գրասենյակների, ՄԱԿ-ի մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Եվրոպական հարցերով տնտեսական հանձնաժողովի և ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի հետ: Համատեղ ծրագրեր կմշակվեն Քաղաքակրթությունների միավորում կազմակերպության (AoC) նախաձեռնությամբ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ԵԽ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ի հավելումն ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի և Միավորված ազգերի կազմակերպության հետ հատուկ փոխհարաբերությունների, Եվրոպայի խորհուրդը կանոնավոր կապեր ունի ավելի քան 30 միջազգային կազմակերպությունների հետ ամբողջ աշխարհում, այդ թվում՝ գրեթե բոլոր մեծ եվրոպական խմբավորումների հետ: Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային այդպիսի կազմակերպությունների հետ շփումները նաև ԵԽ անդամ չհանդիսացող երկրներին հասնելու և ԵԽ հիմնարար արժեքները՝ ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և իրավունքի գերակայությունը, խթանելու արդյունավետ միջոց են:

Հինգ երկրներ՝ Կանադան, Վատիկանը, Ճապոնիան, Մեքսիկան և Ամերիկայի միացյալ նահանգները դիտորդի կարգավիճակ ունեն Եվրոպայի խորհրդում: Գործնական և պրագմատիկ փոխհարաբերությունները բոլոր մայրցամաքներից ԵԽ անդամ չհանդիսացող պետությունների հետ թույլ են տալիս Եվրոպայի խորհրդին ընդլայնել իր գործողությունների շրջանակը և գլոբալ հասանելիությունը: ԵԽ անդամ չհանդիսացող ավելի քան 45 անդամ պետություն Եվրոպայի խորհրդի պայմանագրերը ստորագրող կողմ են կամ մասնակի համաձայնագրերի անդամներ, դիտորդներ կամ մասնակիցներ՝ ինչպիսիք են օրինակ Վենետիկի հանձնաժողովը կամ Հյուսիս-Հարավ կենտրոնը, որը բևեռված է Միջերկրածովյան տարածաշրջանին: Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերը աստիճանաբար կազմվում են այնպես, որպեսզի դրանց մասնակցություն ունենան ԵԽ անդամ չհանդիսացող շահագրգիռ պետությունները:

COUNCIL OF EUROPE · CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհուրդը միջազգային ասպարեզում

Council of Europe - United Nations - OSCE - European Union
Council of Europe - United Nations - OSCE - European Union
Council of Europe - United Nations - OSCE - European Union